

ՊԱՏԻԺՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Մի հարիւր տարի առաջ Անգրիկովկասի մի մասը պարսկական ըէթիմին էր ենթակայ: Անցնելով ուսմաների ձեռքը, այդ մասը մեծ փոփոխութիւնների ենթարկուեց, մինչդեռ Պարսկաստանում տիրում են նոյն կարգերը, որոնց ականատես էին երբեմն մեր պապերը Երևանեան նահանգում: Այդ հին կարգերի ընդունումը կողմերից մէկն էլ պատիժների ձևն ու գործադրութիւնն է:

Պարսկաստանում ընդհանուր կանոնադրքերի հոտն անգամ չը կայ, որոշ օրինական ոչինչ չը կայ: Պարսկաստանում մասնաւորապէս պատիժների և ընդհանրապէս բոլոր կարգերի օրէնքները կամայականութիւնների և քմահաճոյքի մի անվերջ և երկար շարք է: Ինչպէս ուզում է դատաւորի քէֆը, այնպէս էլ նա դատ է կտրում, կողոպտում է սարփարաստը, ինչպէս իր կամայականութիւնն է թելադրում: Այսօր մարդասպանին զըլխատման հրաման է տալիս դատաւորը, վաղը նոյն պայմանների մէջ կատարուած յանցանքը յանկարծ անպատիժ է մնում, որովհետև նրա քէֆը այդպէս է ուզում, որովհետև նրա աչքերը կուրացրել են: Այսօր քեարզուզարը մի որեւէ յանցանքի համար, օր. հաւատ հայնոյելու, հարիւր ճիպտի հարուած է նշանակում, բայց վաղը մէկ ուրիշ քեարզուզար հէնդ նոյն յանցանքի համար առնում է միայն մի քանի թուման տուգանք:

Այժմ էլ Պարսկաստանում ինչպէս և հարիւր տարի առաջ այնպիսի սոսկալի պատիժներ են կատարւում, որոնք յիշեցնում են մարդկութեան շատ հին և վայրենական չըջանները:

Պարսկաստանում գործադրուող պատիժները կարելի է բաժանել հետևեալ խմբերի.

1. Նախնական քեքել պաշիժներ. — Այսպիսի պատիժներ գործ է դրւում աւելի թեթիւ յանցանքների դէպքում, ինչպէս օրինակ՝ տուն կտրելու, վիրաւորելու և այլ նման յանցանքների դէպքում: Այս կարգի պատիժների մէջ ամենահեշտը և տանելին համարւում է «ֆալախկան»: Յան-

ցագործի ոտները դնում են ֆալսիկայի մէջ և ամուր սեղմում են, այնքան ամուր, որ մատների ծայրերից սկսում է արիւն կաթել: Այս վիճակի մէջ է մնում նա այնքան, մինչև խոստովանում է իր յանցանքը, որ անմիջապէս դադարեցնում է կտրական վճիռը. իսկ եթէ չէ խոստովանւում, ֆալսիկային հետևում է մէկ ուրիշ աւելի ծանր պատիժ: Սկսում են անխիղճ կերպով տաքացած շամփուրներով դաղել նրա մերկ մարմինը. իսկ եթէ այդ էլ իր նպատակին չէ հասնում, մի քանի թասեր լաւ տաքացնում և հերթով դնում են յանցաւորի գլխին: Այս կարգի պատիժներին են պատկանում նաև սրանք. վերջնում են սուր քարեր և կամ սրացրած փայտեր, դնում ձեռքի մատների արանքը և շատ ամուր կապում են մատների ծայրերից, կամ թէ մեծ քարեր են դնում ոտների, ազդրերի մէջ և հաստ թուով ոտների ծայրերից կապում: Նա երկար ժամանակ այս վիճակի մէջ է մնում. յաճախ պատահում է, որ ձեռքի մատները կտրւում են, իսկ ոտներից արիւն է հոսում: «Չու դնին» էլ այս կարգի պատիժներից է. սա այնքան սարսափելի և ծանր չէ, ինչքան տարօրինակ: Չուն լաւ տաքացնում են և անցկացնում յանցաւորի յետոյքից, մի պատիժ, որ իսկապէս պարսկի ուղեղը ընդունակ է հնարել. մտածել այդպիսի լսն:

2. Նախնական ծանր պատիժներ.—Շատ աւելի ծանր և սարսափելի պատիժներ կան, որ գործ են դնում ծանր յանցագործների, օր. մարդասպանների վերաբերմամբ: Այս կարգի ամենածանր և եղբնական պատիժները «ղամիշ դնելը» և «ամործիկներից կախելն» են:

«Ղամիշ դնել», հէնց այդ անունը մարդի սարսուռ է ազդում.—նախ վերցնում են ամուր եղեգն, լաւ սրում, ապա անցկացնում մատների եղունգների տակից, այնքան խրում, մինչև որ հասնում է բազուկը: Երբ մի փոքր փուշ մտնում է մեր եղունգի տակ, մի րոպէ անգամ չենք կարողանում տանել. երեւակայէք ահագին դամիշը, որ կտրել, անցել և հասել է մինչև բազուկը. սարսուռում էք չէ, ընթերցող: Իսկ ամործիկներից կախելը. յանցագործին, ձեռները չղթալով, հաստ թուով կախում են մի բարձր տեղից: (Թուր ամրացած է լինում թևերի տակից), ամործիկներից կախում են լիտրանոց, էլ աւելի ծանր, քար, իսկ յաւը կատարեալ դարձնելու համար, երբեմն էլ ցընցում են քարը:

Այս երկու պատիժներից քիչ սարսափելի չէ ճիպտաներով ձեռքերը:

Աւելի ծանր է այս պատժի ձևը: Մեղապարտի ոտները և

ձեռները շատ ամուր կապում են իրար, վզի վրայ նստեցնում մէկ ծանր մարդ, երբեմն էլ երկուսը (ծանր մարդ չը գտնուելու դէպքում), մէջքը մերկացնում և սկսում են անողորմ կերպով հարուածներ տալ ճիպոտներով, նայած թէ զատաւորը կամ քեարզուզարը քանի ճիպոտի հրաման է տուել. օրինակ, ենթադրենք 50 ճիպոտի հրաման է արձակուած. այդ ոչ թէ նշանակում է 50 անգամ խփել, ոչ, այլ 50 ճիպոտով, ի հարկէ առանձին-առանձին, այնքան խփել, որ բոլորն էլ կոտորուեն, փշուր-փշուր լինեն: 10 ճիպոտով կարող են, հնարաւոր է, մօտ 50 հարուած տալ, դուցէ դեռ աւելի, այդ էլ խփողների կամայականութիւնից է կախուած. բայց, առհասարակ, նկատուած է որ խփողները գիտեն ձեռ, այնպէս են խփում, որ ճիպոտները հէնց երկրորդ, երրորդ հարուածից յետոյ կոտորուում են:

3. Բուռ պաշտօն.— Այս նախնական պատիժներին, որ շատ անգամ էլ իսկական պատժի տեղ են դործադրւում, հետևում են բուն կամ իսկական պատժները: Երբ ձեռքն է դեր խաղացել յանցագործութեան մէջ, ձեռքն են կտրում, իսկ երբ ոտը կամ մարմնի ուրիշ անդամը, նրանից են զրկում. բայց որպէս զի ցաւը աւելի սաստիկ լինի, կտրելուց հէնց անմիջապէս յետոյ ձեռքը կամ ոտքը դնում են եռացրած ջրի մէջ, և մինչոյն ժամանակ այդ անում են այն նպատակով, որ սեղմուի, կուշ գայ և արիւն չը հոսի:

Հրացանի կամ թուփի (թնդանօթ) բռնելն էլ այս կարգին են պատկանում: Հէնց նախ անցեալ տարի Թաւրիզում երեք թուրք աւագակ-մարդասպանների թուփի բռնեցին: Արանցից մէկը, որ բաւական հարուստ է լինում, նախօրք կաշառում է թուփչիներին և թուփը այնպէս են բռնում, որ կողքով է անցնում և ազատում է: Տգէտ ամբոխը հրաչք է համարում այդ և ենթադրում է, որ Ալլահի մատը խառն է, թէ նա արդար էր: Բայց զատաւորը այս անգամ հրացանի բռնելու վճիռ է արձակում: Խուժանը սպասում էր, որ էլի կ'ազատուի յանցաւորը, բայց իզուր....:

Պակաս անտանելի չէ և այն պատիժը, որ յանցաւորին շատ ամուր և խնամքով կապում են սիւնից, որ գլուխն էլ հնարաւորութիւն չունենայ շարժելու և վերից ջուրը կաթիլ-կաթիլ, հաւասար ուժով կաթում է հէնց նրա գանգի վրայ: Եւ այդ դրութիւնը տևում է ամիսներ, տարիներ, մինչև ծակում է գանգը և անցնում է ուղեղին: Ո՛հ, ճիշտ, որ սարսափելի է: Այս պատիժը շատ ուշ-ուշ է պատահում:

Ուշ-ուշ է պատահում և այն պատիժը, որ յանցաւորին սպանում են սառույցով: Մեղապարտին նստեցնում են սառույց-

ների վրայ, գլխի, վզի վրայ էլ դնում են մի քանի կտոր սառույց, հալուելու դեպքում նորից են դնում, մինչև նա մահանում է:

Բանտարկելը շատ թեթև պատիժ է համարում այս երկրում: Բանտարկեալները առհասարակ շատ աննշան թիւ են կազմում, նախ այն պատճառով, որ դա թեթև պատիժ է համարում և երկրորդ, որ ամենազլիսւորն է, գոյութիւն չունի բանտային կառավարութիւն: Բանտարկեալի պէտքերը, ինչպէս՝ հաց, ջուր, ծխախոտ և այլն, հոգում են նրա բարեկամները, իսկ եթէ որոշ մարդկանց տրւում է, այն էլ մի կտոր ցամաք հաց և ջուր, համոզուած լինելով, որ յետոյ մէկին 10-ը կ'առնեն:

Ո՛հ, ի՜նչ սարսափելի են սրանց բանտերը: Ստորերկրեայ որջեր, ուր միանգամայն արդելուած է լոյսի մուտքը և բուրում է զգուելի, մահացուցիչ և գաղջ օդ, այդ է Պարսկաստանի բանտերը: Իսկ բանտարկեալի վիճակը. նա ոչ մի հնարաւորութիւն չունի շարժուելու, ոտները, մարմնի մի որեւէ մասը ձգելու: Նրա ոտները ամրացրած են ֆալախկայի մէջ, ձեռքերը շղթայած յետեր, իսկ վզից շղթայով կապած հաստ սեան: Այդ է մարդասպանի և ուրիշ ծանր յանցաւորի վիճակը բանտում:

4. Անչափահասների պատիժները.—Շատ տարօրինակ և միևնույն ժամանակ ցաւալի են փոքրերի՝ 13—15 տարեկանների պատիժները, ընդհանրապէս թեթև յանցանքների, օր. ձու, հաւ, կամ նման արժէքանոց առարկաններ զողանալու դեպքում. փոքրիկ գողերի քթերի միջնորմը ծակում, ամուր թել են անցկացնում, ապա ֆարաշը թելի երկու ծայրերից բռնում և պտտեցնում է ամբողջ գիւղի շուրջը, որպէս զի ամանչեն և մէկ էլ այդպէս բան չանեն: Շատ անգամ էլ, եթէ ֆարաշը չարածծի է լինում և ուզում է տանջել փոքրիկներին, սկսում է առաջ վազել և թելը աւելի ձգուելով ցաւը սաստկանում է, իսկ տղաներն էլ ստիպուած նոյն արագութեամբ վազում են ֆարաշի ետևից: Այս պատիժը յաճախ է կրկնւում մանաւանդ գիւղերում:

Այս կարգի պատիժներից է և այն, որ յանցաւորի ականջը մեխում են ծառին, երեսը ծածկում և գնացող եկողը երեսը բաց է անում, նայում է, թքում և անցնում: Այս պատիժը գործադրում է նաև չափահասների վերաբերմամբ: Փոքրերի վերաբերմամբ գործ է դրւում նաև ֆալախկան, ճիպոտներով ծեծելը, ի հարկէ, աւելի քիչ թուով, և ուրիշ թեթև, փոքր ի շատէ տանելի պատիժներ:

5. Սովորական պատիժներ.—Մասնաւորապէս զոգութիւնների և ընդհանրապէս միւս յանցանքների դեպքում միշտ էլ

հարուստը հնարաւորութիւն է ունենում ազատուել, իսկ աղքատը անպայման կրում է պատիժը:

Երբ երկու մարդ կուում են, կամ մէկը միւսին փող է պարտ լինում և յանկարծ գործը հասցնում են դատաւորին կամ թաղապետին, էլ բաւական է: Խելօք դատաւորը շատ լաւ գիտէ իր անելիքը: Նա առաջ գանգատաւորին մի լաւ ծեծում, դեռ մի գումար էլ փող է առնում և ճանապարհ դնում: Կանչում է միւսին, նոյնպէս ծեծում, մի քանի օր բանտարկում և մի քանի թուման առնելով ճանապարհում: Բայց դեռ գործը չէ վերջացել. մի քանի օրից յետոյ դատաւորը նորից է կանչում նրանց, ծեծում, առնում և տուն ուղարկում ու այսպէս երկար շարունակում է, մինչև որ գանգատաւորն էլ փոշմանում է իր արածի վրայ: Այդ այնքան սովորական բան է, որ ամեն քայլափութում, ամեն օր պատահում է: Եւ իսկապէս, այժմ շատ քչերն են գանգատի դիմում՝ կռուի, նոյնիսկ գողութեան դէպքում: Այգպիսի հանգամանքներից ֆարաշներն էլ գիտեն օգտուել. ներանք իրաւունք են համարում իրանց գնալ, չորել յանցաւորի դռանը, և միայն այն ժամանակ հեռանալ, երբ կը ստանան մի քանի դռան, իսկ չը տալու դէպքում նա սպառնում է քաշել, տանել դատաւորի մօտ:

Ենթադրենք, թէ մի որ և է գիւղում մարդասպանութիւն է պատահել, դատաւորները ոչ թէ հետևում, աշխատում են չարագործին բռնել և պատժել, այլ այդ գիւղից ահագին տուգանք են պահանջում, պատճառաբանելով, որ նրանց գիւղումն է պատահել սպանութիւնը, ուրեմն նրանք էլ պէտք է տուժեն:

Այսպէս, մի երկու տարի առաջ հայաբնակ գիւղում Յ-ը սպանում է մի հրէայի և վերցնում փողը: Իսկ դատաւորները իմանում են և ատամները սրած մտնում են գիւղ սոսկալի պահանջներով: Գիւղացիները ցոյց են տալիս մարդասպանին և պատճառաբանում, որ իրանք մեղաւոր չեն. բայց դատաւորներին ինչ, նրանք իրանց փողի տէրն են և գիւղը 2000 թուման (4000 ու.) տուժում է: Սա եզակի օրինակ չէ, և ոչ էլ ուշ-ուշ կրկնուող, այլ շատ սովորական: Դատաւորները բոլոր առ բոլոր աչքները անկած սպասում են, որ մի բան պատահի, որպէս զի կեղեքեն, քամեն ժողովրդին և լցնեն իրանց անկուշտ կոկորդը:

ԵՐ. ՅՐԱՆԳԵԱՆՑ